Հավելված N 2
ՀՀ կառավարության 2024 թվականի
դեկտեմբերի 19-ի N 2037-Ն որոշման

Կ Ա Ր Գ

ՊԵՏԱԿԱՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԳՈՒՅՔԻ ՆՎԻՐԱԲԵՐՈՒԹՅԱՆ

1. Սույն կարգով կարգավորվում են Հայաստանի Հանրապետությանը սեփականության իրավունքով պատկանող անշարժ կամ շարժական գույքը (այսուհետ՝ պետական գույք) (բացառությամբ դրամական միջոցների, բնակելի նշանակության շենքերի, շինությունների, պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների, «Պետական գույքի կառավարման մասին» օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասով, 5-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով սահմանված գույքի) իրավաբանական անձանց (այդ թվում՝ բուժական, դաստիարակչական հիմնարկներին, սոցիալական պաշտպանության ու նույնանման այլ հաստատություններին, բարեգործական, գիտական և ուսումնական հաստատություններին, հիմնադրամներին, թանգարաններին ու մշակույթի այլ հաստատություններին), համայնքներին, օտարերկրյա պետություններին, քաղաքացիներին և օտարերկրյա անձանց (այսուհետ՝ նվիրաբերության սուբյեկտներ) նվիրաբերության գործընթացը կազմակերպելու հետ կապված հարաբերությունները:

2. Սույն կարգին համապատասխան պետական գույքի նկատմամբ սեփականության իրավունքը փոխանցվում է նվիրաբերության սուբյեկտներին՝ որոշակի պարտավորությունների կատարման պայմանով:

3. Նվիրաբերության սուբյեկտներ հանդիսացող քաղաքացիների խմբերն այն քաղաքացիներն են, որոնք պետական լիազոր մարմնի հետ կնքված հուշագրի շրջանակում Հայաստանի Հանրապետությունում իրականացնում են բարեգործական կամ սոցիալական միջոցառումներ և առաջարկություն են ներկայացրել այդ բնագավառում ծրագրերը շարունակելու վերաբերյալ:

4. Պետական գույքը նվիրաբերությամբ տրվում է նվիրաբերության սուբյեկտներին (բացառությամբ համայնքների), եթե՝

1) նվիրաբերության սուբյեկտների կողմից առաջարկվող հանրօգուտ ծրագրերը վերաբերում են բժշկական օգնություն և սպասարկում իրականացնելուն, դաստիարակչական հիմնարկների, սոցիալական պաշտպանության ու նույնանման այլ հաստատությունների, բարեգործական, գիտական և ուսումնական հաստատությունների գործունեությանը, և

2) նվիրաբերության սուբյեկտների կողմից առաջարկվող հանրօգուտ ծրագրերի իրականացումը նախատեսված է Հայաստանի Հանրապետության կառավարության գործունեության ծրագրով:

5. Հանրօգուտ ծրագրեր են համարվում այն ծրագրերը, որոնք իրականացվում են կրթական, գիտական, մշակութային, մարզական, բնապահպանական, առողջապահական, սոցիալական և բարեգործության ոլորտներում:

6. Հանրօգուտ ծրագրերի գնահատման ցուցանիշներն են՝

1) հանրօգուտ ծրագրի շրջանակներում իրականացվող՝ բարեգործությունից օգտվող անձանց թիվը, այդ թվում՝ ծրագրի առանձին տարիների կտրվածքով.

2) հանրօգուտ ծրագրի շրջանակներում իրականացվող բարեգործության ընդհանուր ծավալը՝ արժեքային արտահայտությամբ, այդ թվում՝ ըստ տարիների.

3) հանրօգուտ ծրագրի շրջանակներում իրականացվելիք ներդրումների ծավալը.

4) հանրօգուտ ծրագրի ժամկետը.

5) հանրօգուտ ծրագրի իրականացման ընթացքում ակնկալվող արդյունքները:

7. Հանրօգուտ ծրագրերն իրատեսական լինելու մասին, սույն կարգի 6-րդ կետով սահմանված ցուցանիշներին համապատասխան, եզրակացություններ են տրամադրում տվյալ ոլորտը կարգավորող լիազորված պետական մարմինները՝ նվիրաբերությամբ պետական գույք ստանալու համար նվիրաբերության սուբյեկտների կարծիք ստանալու նպատակով դիմումները ստանալուց հետո 15-օրյա ժամկետում:

8. Պետական գույքն առանց հանրօգուտ ծրագրի և գնահատման տրվում է նվիրաբերությամբ՝ նվիրաբերության սուբյեկտ համարվող համայնքներին, եթե այն՝

1) օգտագործվելու է տվյալ մարզի սոցիալ-տնտեսական զարգացմանը համապատասխանող ծրագրի իրականացման համար.

2) ապահովելու է տեղական ինքնակառավարման մարմինների սեփական և պետության կողմից պատվիրակված լիազորությունների իրականացումը:

9. Պետական գույքը նվիրաբերության սուբյեկտներին տրվում է Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման հիման վրա:

10. Նվիրաբերությամբ պետական գույք ստանալու համար նվիրաբերության սուբյեկտը հայտով դիմում է Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության պետական գույքի կառավարման կոմիտե (այսուհետ՝ կոմիտե)՝ հայտին կից ներկայացնելով՝

1) նվիրաբերություն ստանալու համար նախատեսված պետական գույքի մասին տեղեկություններ (գտնվելու վայրը, տնօրինող պետական մարմինը, իսկ շարժական գույքի դեպքում՝ տվյալ գույքի բնութագրի մասին տվյալները՝ թողարկման և շահագործման տարին, մակնիշը, հզորությունը, ֆիզիկական չափերը).

2) լիցենզավորվող գործունեության դեպքում՝ գործող լիցենզիայի պատճենը, ծանուցման ենթակա գործունեության իրականացման դեպքում՝ լիազորված մարմնի կողմից տրված ծանուցման պատճենը, կատարված պայմանագրերի պատճենները, հաշվետվություն կատարված ներդրումների վերաբերյալ, նշված ոլորտներում գործունեության փորձ ունենալու մասին փաստաթղթերը.

3) տեղեկություններ իրականացված ծրագրերի և այդ բնագավառում ձեռք բերված արդյունքների մասին.

4) տեղեկություններ նախկինում իրականացված հանրօգուտ ծրագրերի վերաբերյալ.

5) սույն կարգի 5-րդ կետով սահմանված ոլորտներում իրականացվող հանրօգուտ ծրագիրը.

6) հանրօգուտ ծրագրերն իրատեսական լինելու վերաբերյալ սույն կարգի 7-րդ կետով ստացված եզրակացությունները:

11. Կոմիտեն սույն կարգի 10-րդ կետում նշված հայտը և կից փաստաթղթերը ստանալուց հետո 5 աշխատանքային օրվա ընթացքում որոշում է ընդունում սույն

կարգի 10-րդ կետում ներկայացված հայտն ընդունելու կամ մերժելու մասին և 5 աշխատանքային օրվա ընթացքում դրա մասին գրավոր տեղեկացնում է համապատասխան պետական կառավարման համակարգի մարմնին և նվիրաբերության սուբյեկտին: Ընդ որում, սույն կետով սահմանված ժամկետները կասեցվում են սույն կարգի 13-րդ կետում նշված դեպքերում և ժամկետով:

12. Պետական գույքը նվիրաբերության չի տրամադրվում, եթե՝

1) տվյալ պետական գույքն անհրաժեշտ է պետական կառավարման համակարգի մարմնի կամ պետական ոչ առևտրային կազմակերպության կանոնադրական գործառույթների իրականացման համար.

2) տվյալ պետական գույքի օգտագործմամբ կամ ներդրմամբ իրականացվում է Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից հավանության արժանացած որևէ այլ ծրագիր.

3) տվյալ պետական գույքը տրամադրված է վարձակալության կամ անհատույց օգտագործման իրավունքով՝ բացառությամբ այն դեպքերի, երբ հայտ ներկայացրած նվիրաբերության սուբյեկտը տվյալ պետական գույքի վարձակալն է կամ օգտագործողը, կամ առկա է Հայաստանի Հանրապետության կառավարության 2021 թվականի փետրվարի 18-ի N 202-Ն որոշմամբ հաստատված կարգի համաձայն անցկացված մշտադիտարկման արդյունքում կազմված համապատասխան արձանագրություն.

4) տվյալ պետական գույքը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ընդգրկված է պետական գույքի մասնավորեցման և օտարման ծրագրերի ցանկերում.

5) յուրաքանչյուր դեպքում նվիրատվության ենթակա գույքի օգտագործումը նախատեսված է պետական կարիքների առաջնահերթ բավարարման համար:

13. Նվիրաբերության սուբյեկտի կողմից սույն կարգի 10-րդ կետով նախատեսված փաստաթղթերը թերություններով ներկայացնելու դեպքում կոմիտեն 5 աշխատանքային օրվա ընթացքում համապատասխան գրությամբ այդ մասին տեղեկացնում է նվիրաբերության սուբյեկտին, ով գրությունը ստանալուց հետո 10

աշխատանքային օրվա ընթացքում պետք է շտկի փաստաթղթերում առկա թերությունները:

14. Սույն կարգի 10-րդ կետով նախատեսված հայտը կոմիտեի կողմից մերժվում է, եթե՝

1) չեն ապահովվել սույն կարգի 10-րդ կետով նախատեսված պահանջները.

2) սույն կարգի 13-րդ կետով սահմանված ժամկետում չեն շտկվել ներկայացված փաստաթղթերում առկա թերությունները.

3) առկա է սույն կարգի 12-րդ կետով սահմանված դեպքերից որևէ մեկը.

4) տվյալ պետական գույքն առանձնացվել է Հայաստանի Հանրապետության օրենքներով հաստատված պետական գույքի մասնավորեցման ծրագրերում ընդգրկված ընկերությունների գույքի կազմից.

5) սույն կարգի 7-րդ կետով նախատեսված մարմինների կողմից սույն կարգի 6-րդ կետով սահմանված՝ հանրօգուտ ծրագրերի գնահատման ցուցանիշների մասին տրամադրվել է բացասական եզրակացություն:

15. Նվիրաբերությամբ պետական գույք ստանալու համար ներկայացված հայտի վերաբերյալ դրական որոշում ընդունելուց հետո կոմիտեն երկամսյա ժամկետում Հայաստանի Հանրապետության կառավարություն է ներկայացնում պետական գույքի նվիրաբերության մասին Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագիծ՝ նախատեսելով, որ նվիրաբերության սուբյեկտի ներկայացրած հանրօգուտ ծրագիրը համարվում է պայմանագրի անբաժանելի մասը: Նվիրաբերվող գույքը պետական կառավարման համակարգի մարմնին կամ պետական ոչ առևտրային կազմակերպությանն ամրացված լինելու դեպքում կոմիտեն Հայաստանի Հանրապետության կառավարություն է ներկայացնում Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման համապատասխան նախագիծ՝ տվյալ գույքը համապատասխան մարմնի հաշվեկշռից նվիրաբերելու վերաբերյալ՝ առանց կոմիտեի հաշվեկշիռ բերելու:

16. Պետական գույքը նվիրաբերելու մասին Հայաստանի Հանրապետության կառավարության որոշումը պետք է ներառի առնվազն հետևյալ տեղեկությունները՝

1) նվիրաբերվող պետական գույքի նկարագիրը (անվանումը, գտնվելու վայրը, անշարժ գույքի դեպքում՝ մակերեսը (քառակուսի մետրով արտահայտված), անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայականի տվյալները, շուկայական արժեքին մոտարկված կադաստրային արժեքը).

2) տեղեկություններ նվիրաբերության սուբյեկտի (սուբյեկտների) մասին (անվանումը, գտնվելու վայրը), քաղաքացիների համար՝ նույնականացման քարտի տվյալները կամ անձնագրի տվյալները.

3) նվիրաբերվող պետական գույքի օգտագործման նպատակը և նվիրաբերության սուբյեկտի ներկայացրած հանրօգուտ ծրագրի հիմնական պայմանները.

4) անհրաժեշտության դեպքում՝ այլ տեղեկություններ:

17. Հայաստանի Հանրապետության կառավարությունը կարող է մերժել կամ թույլատրել պետական գույքի նվիրաբերությունը նվիրաբերության սուբյեկտներին՝ հաշվի առնելով օրենքով սահմանված կրթական, գիտական, մշակութային, մարզական, բնապահպանական, առողջապահական, սոցիալական, բարեգործական ոլորտներում իրականացվող քաղաքականության ուղղությունները և առաջնահերթությունները:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

20.12.2024
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ